Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել է տարբերակ 10-ի նյութական իրավունքի բաժնի 14"46-րդ, 15"10-րդ, 16"42-րդ, 3"35-րդ, 30"41-րդ, 36"45-րդ հարցերը, դատավարական իրավունքի բաժնի 10"73-րդ հարցը

Նյութական իրավունք

46-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա հանգամանքներից, ինչպես նաև փաստական սխալի որակման կանոններից, ընդունելի չէ համակցության կանոնների հիման վրա հեղինակի կողմից ընտրված տարբերակի հիմնավորումը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտած դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

42-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության*

կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացվող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից առավելապես մեջբերվել է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ առանց դրանք խնդրի փաստական հանգամանքների հետ համակցման, բացակայում են ինքնուրույն վերլուծությունները, որպեսզի պայմաններում հանձնաժողովի համար հասկանալի չէ, թե ինչու է հավակնորդը նշել Դ-ը տարբերակը, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

41-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում քրեական օրենքի տրամաբանությունից, քանզի հափշտակության կատարումն այլ անձի ներկայությամբ /բացառությամբ հանցակիցների/ այն պայմաններում, երբ հանցավորը գիտակցել է, որ այդ անձը ընկալում է իր կողմից կատարվող արարքի բնույթը, չի կարող գնահատվել գաղտնիության պայմաններում կատարված, ընդ որում որևէ նշանակություն չունի այդ անձը սեփականատերն է, թե՝ մեկ ուրիշը, հետևաբար հավակնորդի հիմնավորումը ընդունելի չէ, ուստի գնահատականը չի բարձրացվում:*

45-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի են, ուստի տրվում է 1 միավոր:*

Դատավարական իրավունք

73-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները ընդունելի են , քանզի խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, հետևաբար նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***4072*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն" նյութական իրավունքից ստացված 25 միավորը բարձրացնել 2 միավոր՝ արդյունքում արձանագրել 27 միավոր:Դատավարական իրավունքից ստացած 28 միավորը բարձրացնել 1 միավորով՝ արձանագրելով 29 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ